

Յակօբ խոհեմ գպրի: ի Հայրապետութեան սրբոյ  
Էջմիածնի՝ Տեառն Մինասայ ակնեցւոյ: Յամի  
Տեառն 1751, ի Յունիսի ի Վէնէտիկ, ի տպ-  
Անտոնի Պօսթօլի: Հրամանաւ Մեծաւորայ:»  
(Մատ. էջ 539:)

Մեծութիւն  $12.5 \times 7.5$  շրջանակի մէջ. էջ  
I—XII. 1—318, 1 պատկեր:

Յիշատակագրութիւն. էջ IV. «Կախեր-  
գան... Իսկ որ առ բան տպագրութեան սորին՝  
գիտել պարտիս. զի ունելով իմ աստ զմի միայն  
հնագոյն օրինակ ձեռագիր, որոյ տառքն ի բազում  
ուրեք եղծեալք էին, եւ բառքն գրեթէ անհե-  
տացեալք, եւ ոմանք տեղիք եւս այնպէս շփոթա-  
կան սխալանօք լցեալք էին, որք իբր թէ՛ կարօ-  
տանային յարգարէանալոյ... որքան կարելի էր  
միով օրինակաւ, ջանացի ուղղագրել բոտ տկա-  
րիմաց ենթագատման իմոյ՝ առանց այլայլելոյ  
զբունն... նոյն նախասացեալ նունենց Պօղոսն...  
ոչ խնայեաց ծախել զգրամն իւր յաղագս ծա-  
խուց տպագրութեան սորին... Արդ թէպէտ  
խնդրօղն էր վերոյիշեցեալն. բայց միջնորդն խըն-  
դրոյն, որոյ անսացօղ եղէ ես, էր Հարազատ սիրելի  
ոմն ինձ ի մանկական տիոց հետէ, եւ մանաւանդ  
երախտաւոր, որ կոչի իսկ՝ Տիրացու Յօհաննէս  
Իգնատիոսեան... վերջապէս եւ ինձ... որ մեծաւ  
աշխատութեամբ տքնիմ վասն օգտի ձերոյ՝  
Պանդխտակոչկոծ լեալ ի նշդեհութեանս վայրի,  
Տէր այցելութիւն արասցէ բարեխօսութեամբ  
Սրբոյս, պաշտպանելով ի հոգեւոր եւ ի մարմնաւոր  
դարանակալաց, նաեւ յաղուէսաբարոյ մարդէլու-  
զաց, եւ խորամանկաց, յորոց ոչ սակաւ վնասս  
կրեցաք, եւ կրեմք տակաւին... Սարգիս Վար-  
դապետ եւ Արքեպիսկոպոս Կ. Պոլսեցի:»

14. «Էջմիւրդէ ե- Տարբերութիւնն...»:

Նոյն վերն յիշուած՝ 1748ին տպուած Էջմի-  
ւրդէի, հետ, այլեւայլ փոփոխութիւններով: